

Թեան մէջ: Այդպիսով կարողանում էր նա մի և նոյն ժամանակ դրամական նուէրներ հաւաքել իւր իսկ հիմնած հաստատութիւնների համար: 1857 թ.-ին Վիսերը կառավարութիւնից բարձր պաշտօններ ստացաւ՝ բանտարկեալների և աղքատների խնամատարութեան համար օրէնքներ մշակելու: Մա մեռաւ 1881 թ.-ին, վերջին տարիները բոլորովին հիւանդ և ուժասպառ:

(Կը շարունակուի...)

Դարեգին Վարդ. Յովսէփեան.



ՅԱՃԱՆՈՒՄԱՆՈՒՄԻ ԻԳՐՈՂ ԺԱՌԸ.

ԺՈՒՄՆԱԳ ԾԳՆԱՆՈՐԱՅ ԵՒ ՅՈՅՅԻ ԷՆԴԻՍԻՍԻՑ,
ՈՐ ՅԱՌԱՔԵՆՈՒԹԻՒՆ ՅՈՐԳՈՐԵՆԱ:



Վանքը, որ այնքան մեծ պատմական դեր է կատարել և եկեղեցական կեանքի մէջ զօրեղ գործօն ոյժ հանդիսացել՝ յառաջ եկաւ Դ. դարում: Եկեղեցւոյ յաղթութեան հետ քրիստոնէական-բարոյական կեանքի մէջ իշխող դարձան ի սկզբանէ անտի նորա գրկում սնուցած ծգնական գաղափարները. մարմինը իսպառ սպանել՝ հոգւոյ փրկութեան հասնելու համար, այդ էր նշանաբանը, որով գէպի վերջնական կատարելութիւն պէտք է առաջնորդուէին: Այս գաղափարների ազդեցութիւնը այնքան մեծ էր ժամանակակիցների վրայ, որ շուտով անապատները լեցուեցան ամեն կարգի և հասկացողութեան աէր մարդոց բազմութեամբ: Անապատականների խմբակցութիւնից յառաջ եկան վանքերը՝ նախ Եգիպտոսում, ապա և Պաղեստինում, Ասորիքում և այլ ուրեք: Վանքերի առաջին կազմակերպողը համարուում է Պախովիոս՝ 292—348 թ. բայց հաստատուն հիմունքների վերայ դնողը, կանոնաւորողը և եկեղեցական կեանքի հետ սերտ կերպով կապողը եղաւ մեծն Բարսեղ Սեսարացին (330—379 թ.): Իւր կեանքի առաջին տարիներում նա ևս

յափշտակուեց առանձնական կեանքով՝ համարելով այն կատարելալ, հրեշտականման, ճշմարիտ փիլիսոփայական կեանք. բայց երկար ծանապարհորդութիւնից յետոյ, տարիների ընթացքում, անձնական փորձերով հասաւ այլ համոզման: Միայնակեցի կեանքը «չարացողաց» գրքի մէջ անուանում է նա «անպատու» տեսական կեանք. նորա հոգւոյ առաջ պատկերացող կատարելութիւնը սիրոյ պատուէրի մարմնացումն է գործնական կեանքի մէջ՝ մի գաղափար, որ այնուհետեւ մեծն Բարսեղի ամբողջ կեանքի առաջնորդողն է դառնում: Պատուէրների մեծը և առաջինը՝ աւետարանի էութիւնը կազմող սիրոյ պատուէրը, որ առօրեայ կեանքի մէջ հնարաւորութիւն չկար այլ ևս իրականացնելու. ուստի և նա հիմնում է աշխարհից առանձնացած եղբայրութիւն-վանք, սիրոյ և սորանից բղխող հնազանդութեան, խոնարհութեան ու հաւատարմութեան սկզբունքների վրայ հաստատուած. իսկ սիրոյ գործն է քաղցածին կերակրել, մերկին զգեցնել, հիւանդին թըրուառն խնամել, օգնութեան հասնել և ինչ, մի խօսքով բարեգործութիւն՝ բառիս ընդարձակ նշանակութեամբ: Այս նպատակին ձգտող վանքերի մէջ մեծ տեղ է բռնում աշխատանքը, ոչ միայն իբրեւ բարոյական կրթութեան կամ եղբայրութեան պահպանութեան միջոց, այլ և անհրաժեշտ պայման՝ սիրոյ առաջնորդող սկզբունքն իրագործելու համար. ուստի վանականները բոլորն էլ անպայման պարտաւոր են աշխատել և խոստովանել «որ ոչ գործիցէ, կերիցէ և մի»: Աշխատանքների ընտրութեան ժամանակ առաւելութիւն է տրուում երկրագործական պարապմունքներին և խաղաղ արհեստներին կամ ձեռքի աշխատանքի: Սակայն Բարսեղեան վանքերում ընդարձակ ծաւալ ստացան նաեւ գրական պարապմունքները, և վանքը դարձաւ միանգամայն զպրոց, քրիստոնէական գիտութեան կեդրոն: Արանց վանքերի մօտ յառաջ եկան նաեւ կուսանոցներ: Վանքերը իրենց կոչման ծառայելու համար անհրաժեշտ բար պիտի հիմնուէին շէն տեղերում, բնակութեանց մօտ՝ աշխարհի մէջ: Ս. Բարսեղի վանքերը շուտով մեծ ընդարձակութիւն գը-

տան ամբողջ արեւելքում, առանձնապէս յունական եկեղեցւոյ մէջ, ու իրենց ձեռքն առին ժողովրդի քրիստոնէական բարոյական կրթութիւնը, լուսաւորութիւնը և բարեգործութիւնը:

Այս սուղ ակնարկը վանքերի մասին կարեւոր համարեցինք անել, որովհետեւ անմիջական կապ ունի այն մեր առաջ դրած խնդրի հետ: Արդ տեսնենք թէ՛ ըստ մեր մատենագրութեան վկայութիւնների, երբ է մուտք գտել վանքը Հայաստանում—Ըստ Բիւզանդարանի Յերսէս մեծ ս. Բարսեղի բոլոր մարգասիրական հաստատութիւնների պատուաստողն է եղել Հայկական հոգի վերայ՝ նորա կազմակերպած վանական կեանքն այստեղ փոխադրելով: Փաստոս վկայում է, թէ Աշտիշատի ժողովում ի միջի այլոց՝ «կարգեցին» կազմեցին, կանոնեցին՝ յօրինեցին և արարին զամենայն ժողովուրդս երկրին Հայոց իրրե կարգ միաբանութեան վանականաց համաշխարհի բայց միայն յամուսնութեան օրինաց» կամ «Բազմացոյց զկարգս եկեղեցեաց ի շէնս և յանշէնս՝ սոյն աւրինակ բազմութիւնք կըրօնաւորաց»: ¹ Պատմական ժամանակագրական տեսակէտից՝ այս վկայութեան դէմ չի կարելի ոչինչ առարկել: Խորենացին աւելի որոշ խօսքերով հաստատում է, թէ Յերսէս Մեծ շինեց հիւանդանոցներ, որբանոցներ, աղքատանոցներ, այլև «հրամայեաց յամենայն գիւղըս վանս շինել, զի լինիցին օտարանոցք և տեղի անդեան որոց, և ծերոց, և անունդացն տաճոմն»: ² Այս վկայութիւնը կասկած չի թողնում, որ Յերսէսի մտքած վանականութիւնը Բարսեղեան էր:

Բայց միւս կողմից մեր պատմական յիշատակարաններից ոմանք Հայաստանում վանականութիւն յառաջ բերելը վերագրում են Լուսաւորչին՝ այսպէս. Ազաթանգեղոս ասում է «և դարձեալ բազում և անհամար զունդս զունդս վանականաց ի շէնս եւ յանշէնս՝ դաշտականս, շինակեացս և լեռնակեացս՝ անձաւամուտս և արգելականս հաստատէր»: ³ Սոյնն է կրկնում նաև Զենոբ:

Այլ և «ս. Սահակայ թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի և որոշման վանաց» պատմական կարեւորութիւն ունեցող յիշատակարանի մէջ ⁴ ասած է՝ կողմնակի կերպով, թէ վանքերը (սորա նկարագրած վանքերը ևս Բարսեղեան են) Յունաց, Հռոմոց և Ասորոց մէջ ծաղկում են, և թէ Լուսաւորիչ ևս մտքը բեր է Հայաստան «ի հոգւոյն սրբոյ զաւգուտ մատակարարութիւն» ստանալով: Այս վկայութեանց դէմ՝ կարելի է առարկել՝ եթէ խօս. 4-ը այն բանի մասին է, թէ Լուսաւորիչ ծրգնական խիստ կիսաք վարել է և նորա օրինակին շատերը հետեւել են՝ կարելի է այդ իրրե ստոյգ պատմական վկայութիւն ընդունել, բայց ինչ որ բուն վանքերին է վերաբերում՝ եկեղ. պատմութիւնից յայտնի է, որ Լուսաւորչի ժամանակ նոքա դեռ ոչ մի տեղ գոյութիւն չունէին: Մասնաւորապէս Ազաթանգեղոսի վկայութեան մասին պէտք է նկատել, որ նոյնք բառացի կորեան պատմութեան մէջ ասած է ս. Մեսրոբի համար: ² Այս վկայութիւնները միայն այն են ցոյց տալիս, թէ Ս. դարում արդէն սկսեցին Լուսաւորչին վերագրել ի միջի այլոց վանականութեան մուտքը Հայաստան, և թէ այսպիսի ձգտման արդիւնք է նաև այս ճառը, որ ինչքան գիտենք մեր վանքերի մասին ամենահին գրաւոր յիշատակարանն է և ի վաղնջուց Յաճախապատումի միւս ճառերի հետ վերագրուել է Լուսաւորչին: Մենք յիշեցինք, որ Հայաստանում ևս Բարսեղեան կարգերով էին կառավարում վանքերը. արդ տեսնենք թէ ինչ առնչութիւն կայ այս ճառի և ս. Բարսեղի «Հարցոգաց» գրքի մէջ, որով կարելի կլինի գուցէ ոչ միայն նորա, այլև ամբողջ Յաճախապատումի ժամանակագրութեան մասին մի եզրակացութիւն հանել:

Տեսնենք թէ ինչպէս է որոշում նոցանից իւրաքանչիւրը վանական պաշտօնեաների կոչումը:

Առաջնորդ: — Առաջնորդի իրաւանց և պարտականութեանց մասին երկուսն ևս նոյն

1. Բիւզ. Դ-ոյ սպագր. Դ. գլոխ:

2. Խորեն. Գի:

3. Ազաթ. ձեռ. 486:

4. Պ. Արշակ Տ. Միխիլեան՝ Յանսի. յառաջարանի մէջ, լցիսեմի ինը իմիք ընդունելով, այս բուրքը Լուսաւորչիմն է կաւարում: Տես. Սոփիւրի էջ 36—37. Վեմես:

2. Տես. Կոր. 36—37. Վեմես:

Հայեացքն ունին: Ս. Բարսեղ «Հարցողաց» գրքի յառաջարանի մէջ նորա կամքն անպայման հեղինակութիւն և օրէնք է համարում: Նորան, իրրե Աստուծուց կարգուածի, բոլոր պիտի հնազանդեն՝ ապաստմբը Աստուծոյ դէմ է ընդվզում:

Ահա մտքերի նմանութեան մի քանի օրինակներ.

Ս. ԲԱՐՍԵՂ.

ՅԱՃԱԽ.

Արդ այժմ յառաջ ընտրեալի միոյն խափանեցի ամենայն կամաւոր կամ (առաջնորդի նըկատմամբ).

Համեմայն կանս մարմնոյ եւ զմեաց խափանեցաք եւ տուաք զանձինս ի ծառայութիւն նախ Տեառն և ապա առաջնորդաց. (211)

Այլ մի զնոյն իմեմ եւ գովելիմ առանց նորին (առաջ.) կամաց արաւցէ՝ անհնազանդութիւն է և մեծ քան զուղղութեան են յանցանքն:

Եթէ որ առանձին մտաբերիցէ յառաքինութիւն համարի, զոր եւ գործիցէ իսկ ի բարձրացումիցն, առանց կամաց առաջնորդի և եղբայրութեան, անընդունելի է Աստուծոյ և ի մեղս համարեցի. (218).

Այս բանի իրրե ապացոյց երկուսն ևս նոյն վկայութիւնն են բերում. «զի որ ընդդէմ կացցէ իշխանութեան» ևլն:

ԿԱՆ. ԼԵ.

Ամենայն պատուիրանացն ևլն. յայնի օրինակ զիւր վարսն տարով, զիսկեմարնեան... հեղուրեան, բարուց արգի... բարեգութ եւ երկայնամիտ:

Օրինակ չիմէլ ամենայն բարեմարտեանց կարգաց եւ կրօնից, խոնարհութեան, հեղուրեան... երկայնամտութեան. ևլն (215):

Հանդարտութեամբ և զբժշկութիւնս ամենայն գթածութեամբ չափով ի վերայ ածել. զգաստ առ մեծաւորս եւ նախասես առ հանդերձեալսն:

Իմաստութեամբ և գիտութեամբ խրատել, և որ վերակացուն է զգաստ չի առ մեծաւորս եւ նախասես առ հեղուրեան, խրատել զեղբարս խորագիտութեամբ (210):

Տնտես:—Տնտեսի պաշտօնէութեան առաջնորդող սկզբունքը երկուսի համար ևս նոյնն է.

Ս. ԲԱՐՍԵՂ. ԿԱՆ. Լ.

ՅԱՃԱԽ.

Ո՛չ մարդկան այլ նոյն

Այլ որ տնտեսն է հա-

խնքն Տեառն ապաստաւորին.

մարեցի զինքն Աստուծոյ մատակարար. (213)

Գրած եւ երկայնամիտ առ ամենեւեմ:

Որպէս մայրենի գրով առ ամենեւեմ լիցի: (213)

Տնտեսի նկատմամբ շեշտում է մի քանի անգամ երկուսի մէջ ևս՝ «մի հեղգացի, մի հեղգութեամբ» խօսքը, որպիսի ընթացքի մասին Բարսեղ երկար խօսում է. իսկ Յաճ. ընդունելով իրրե որոշ, թէ ինչ պիտի արուի այդ դէպքում, ասում է՝ «Թողումք ասել, որ այսպէս ոչ արարին» (214):

Հիւրընկալք. — սոցա պարտականութիւնները ըստ երկուսի ևս նոյնն է՝ մտաբերելն ինքն հաց տալ, հիւրերին խնամել ևլն. և ոչ մի դէպքում նորա չպիտի գործ տեսնին առանց առաջնորդի կամքին.

Ս. ԲԱՐՍ. ԿԱՆ. ՃԻ. և ՃԻԱ.

ՅԱՃԱԽ.

Ամենայն ոք, որ արտաքին կամաց առաջնորդին զայս արաւցէ՝ խրատեցի (հաց տալու մասին է խօսքը).

Գաւեմայն իւր ի կամաց վերակացուի եղիցի հրաման և որ ինչ նորօք մատակարարին, նմա պարտ է դիտել զամենայն որպէս արժան է (214):

ՃԻԶ. ԿԱՆ.

Երկ ի ծուրաբեմ կարուցէ և կամ յարհաւարհաւաց արտաքին վարեցէ (անօթ). (օր. որ արտաքին վարեցէ որպէս սեղանակողոպուտ իսկ որ կորոյսն, որպէս պատճառք կողոպտողի). դասեցի՝ զամենայն, որ Տեառն անուանեալ է և Աստուծոյ նուիրեալ:

ՃԻԵ. որպէս Աստուծոյ անուանեալ և նուիրեալ... անվհճեր զփոյթ ցուցանել:

Այլ որ տնտեսն է զգուշացի անօթոյն. մի ի ծուրաբեմ կարուցէ կամ յարհաւարհաւաց արտաքին ընկեցէ և անփոյթ արտաքին անօթիցն, յաճախ ի ծախ առից ոչ ի հաճոյս Աստուծոյ, և կրեցէ դասասան ի Տեառնեմ. զի ամենայն ինչ յԱստուծոյ է նուիրեալ յաղազս պիտոյից եղբայրութեան (213):

Եւ յաղազս պիտոյից մի քանի պաշտօնների մասին, որ արդէն մէջ բերինք. իսկ միւսների՝ գործակատարների մասին, շատ քիչ բան է ասում և առաջնորդող սկզբունք է դնում՝ թէ նորա իրրե Աստուծոյ ծառայք պիտի աշխատեն.

Ս. ԲԱՐՍԵՂ.

30.20.10.

(Տնտեսները) «Լ ԵՄԼՔ
որք ի գործ եղբայրու-
թեան սպասաւորութիւն
ցուցանեն, որպէս զի ոչ
մարդկան, այլ նոյն ինքն
Տեառն սպասաւորեն»:

Շնդեսպէս և ամենայն
որ, որոց գործ հաւատա-
ցաւ և հոգք առ ի պէտս
եղբայրութեան ... միշտ
զԱստուած ունել առաջի
աչաց ... որպէս Աստու-
ծոյ մշակ անխարդախ
յամենայնի, ևլն. (214—
215).

Ճիշտ-բոլոր կանոններ խօստում է նոցա մասին, որոնց յանձնուած է մառանք և պատուիրում, թէ չպիտի պատճառ բերեն իրենց գործը և հասարակաց պաշտօնից յետ ընկնեն, և սորանով ուրիշների գայթակղութեան տեղիք տան: Նոյնն ասում է հիւրընկալների մասին: Իրանց գործին զգոյշ պիտի լինին, որ չընկնեն դատի տակ:

Ս. ԲԱՐՍԵՂ.

3025.10

անկցի ի հեղգացելոցն ի զի մի ի հեղգացելոցն ի
դասաստան. դասաստանս անկանիցին (214)

Ս. Բարսեղ որոշում է, թէ որն է հեղ-
գացելոց զատաստանը. իսկ Յաճ. ենթադրում
է, թէ որոշ է արդէն:

Աշխատանքի և նորա բաժանման եղա-
նակի նկատմամբ երկուսն էլ համաձայն են.
(համեմատել, Կ. ՂԴ. 211 էջի հետ):

Ս. ԲԱՐՍԵՂ. Կ. ԼԴ.

Իրախանիւր ունեմ պարս
 Է իւր գործոյն ուշ դնել և
 զայն ցանկալով **Հոգալ**, որ-
 պէս Աստուծոյ նուիրեալ, ան-
 դանդաղ փութով և **Հոգա-**
լով մօտաւորութեամբ լը-
 նուլ, զի ունիցի համարձակու-
 րիւն ասել յամենայն ժամ...

Ջիրախանիւր գործն յա-
 նապաշուցանել փութապէս և
 անդանդաղ **զփառաբանու-**
թիւնն աւարտեցին Հաճոյ
Աստուծոյ և առաջնոր-
դին և եղբայրութեան, զի
 կարացին ասել ամենե-
 րեան ք... (211):

ՃԺԶ-ըդ կան. Արդեօք ամէնքին ևս հա-
ւասար պիտի մատակարարել՝ թէ՞ չըստ կա-
րեաց և վաստակի».

որ յայն կարգեալ է Տնտեսք: «Ըստ իւրաքանչիւ-
սալ իւրաքանչիւ ըստ որում րոնցն արժանի ըստ պիտոյիցն
պէտք ոք ունի Տարկաւո-
ղարմանան՝ առնէ ... ծե-

բապէս պարտի ճանաչել բոցն Լէն. վաստակաւոր
գիւրաբանչիւր աշխա- րացն ... (213)
տուծեանցն բժշկուծիւն
բոս արժանեացն:

ԼՔ. Վանքից հեռանալ կարելի է միայն
երկու դէպքում:

Ս. ԲԱՐՍԵՂ,

BU.2U.10.

Ա. երբ «Վանս պատուիրանացն Տեառն պլուր դք ձգիցի», Բ. երբ փոփոխամտութեամբ կամ այլ պատճառով մէկի մը նալն անհնարին է. և այն ևս միայն «յն քաղաքն վկայութեամբ»։ — Նոյն պայմաններն է դնում։ Ա. երբ մէկը եւ պիտ' է լինում. Բ. երբ «Բաղնացն վկայութիւնս հաւատարիմ ե» (212—213)։

Ոնչպէս պէտք է վերաբերուել դէպի մե-
ղուցեալի դարձը:

Յառաջնորդէն փոր-
ձեալ ծանկիցի ժամանա-
կըն և օրինակն. ըստ հա-
տակին և ըստ քաւարոսքեան
ոգոյնի և մեղացն զանա-
զանութիւնս

Խրատի զեղբարս Խո-
րազիտու թեամբ ըստ ժա-
մանակին, ընդ ընդունե-
լու թեան, ըստ քաւարոց սր-
տի: Լին. 210

Անհաւանի մնասին:—Այսպիսին նկատուում է իբրեւ վարակիչ հիւանդ անդամ, որ բժշկների օրէնքով պիտի կտրել և դէն ձգել, երկուսն էլ նոյն պատկերին են դործ զնուած՝ անդամահատող բժշկի (համեմատել Կ. ԻԴ. Եւժ. 211—212 էջն էյն):

Համեմատելիս աչքի առաջ ունեցանք միայն կարգերը և պաշտօնները, որոնց մէջ ըստ մեզ աւելի դրական կերպով կերեւար մէկի միւսից ունեցած կախումն: Այս Համեմատութիւնը հետեւեալն է ցոյց տալիս. Ճա֊ի մէջ յառաջ բերուած կարգերը նոյնն են, ինչ որ ս. Բարսեղիներ. պաշտօնութիւնը և դորա մասին ունեցած հայեացքները ևս նոյնն են. այլ և վանքի նպատակը, կոչումը, բացի այս, էական որոշ արտայայտութիւնների, մինչև իսկ բառացի նմանութիւնների՝ նման զազափարների, կարգերի մասին: Այս բոլորը հաստատում են սոցա իրարից ունեցած կախումն, առընչութիւնը: Ձեռք կարող ենթադրել, որ երկուսն ևս անկախ են յառաջ եկել և նմանութիւնները պատահական են. մնում է ասել, որ

մէկը միւսի համար աղբիւր է եղել. իսկ որովհետեւ «Հարցողաց» գրքի համար ոչ մի կերպ ենթադրել իսկ չի կարելի, որ այդ ծառը աղբիւր եղած լինի՝ ուստի մնում է մի ելք—ընդունել, որ վերջինս նորանից է օգտուել: Արդ, տեսնելք թէ ինչից է յառաջ գալիս կարգերի էական գաղափարների նոյնութեան հետ միասին նաև տեղ տեղ բառացի նմանութիւն: Սորա պատճառն այն է, որ մեր այս ծառի հեղինակն առանց դիտումն ունենալու Հարցողաց գիրքը համառօտել՝ պահպանելով կարգերը, և կազմել կանոնադրութիւն մեր վանքերի համար՝ մի թուղթ է գրել խրատելու յորդորելու համար, որ եղած կարգերը պահպանեն: Այս է պատճառը նոյնպէս, որ այստեղ խօսուում է ոչ բոլոր կարգերի և պաշտօնների մասին, այլ մի քանի գլխաւորների. չի ասած՝ սահման կամ կարգք, այլ խրատք ձգնաւորաց, ... որ յառաքինութիւն յորդորեն: Ապա, եթէ դառնալու լինիք բովանդակութեան՝ խնդիրը աւելի ևս կպարզուի: Ծառիս հեղինակը ոչ մի պաշտօն կամ կարգ ինքը չի սահմանում և չի որոշում, այլ խօսում է ընդհանրապէս՝ շեշտում է առաջնորդող սկզբունքները և յորդորում, որ անխափան պահպանուին նոքա: Այսպէս, չսահմանած թէ վանքում ինչպիսի աշխատանքներ պիտի լինին, ինչու և ինչպէս պիտի բաժանուին և ինչ. նա ասում է՝ «այլ որ տեսուչք են» «եզանց հորադործաց, կամ խաշանց արօտա» «կանաց, և հօտից կթոյ, և զբաստուց բեռ» «նակրաց» 214 և ինչ. սոցա զործունէութեան սկզբունք է տալիս, որ իբրև Աստուծոյ զործակատարներ համարուին՝ մի բան, որ զործնական քիչ նշանակութիւն ունի. նոյնն է և աղօթքի մասին, թէ և աւելի կարիք կար որոշելու գէթ աղօթքը, որ վանքի մէջ էական տեղ է բռնում, բայց որ յիշատակուում է արդէն իբրև ծանօթ և որոշ ինչ, «և հասարակաց պաշտօնն մի պատճառանօք ինչ խափանեցի» և ինչ այն ինչ Բարսեղ այս ամէնի համար ևս որոշ սահմաններ է դնում:

Թէ գրողը ի նկատի ունի որոշ ծանօթ կարգեր և մինչև իսկ զոցա մասին զբաւոր աղբիւր, այդ նկատմամբ ինքը հէնց թղթի սկզբին ասում է. «Ամենայն որք հրաժարեցան յաշխարհէս և ընծայեցին Աստու-

ծոյ զանձինս ի հնազանդութիւն ճշմարտութեան սուրբ հարցն աւանդից կուսութեամբ ձգնաւորել... զգոյշ կացցեն» ուրեմն ծառիս հեղինակն ի նկատի ունի նոցա, որոնք վանք են մտել կրօնաւորական կեանք վարելու համար ըստ հարցն աւանդից, ուրիշ խօսքով մի կազմակերպուած վանք ըստ հարցն աւանդից, որի կարգերը յառաջ են բերուած իր թղթի մէջ: Մի ուրիշ վկայութիւն աւելի որոշ ցոյց է տալիս, որ նա ձեռքի տակ ունի նաև զբաւոր աղբիւր: Խօսելով այն բանի մասին, թէ ով որ միանգամ ուխտել է վանք մտնել, չի կարող իր զաշինքի հակառակ ընթանալ՝ թողնել վանքը, նա մէջ է բերում մի հեղինակաւոր վկայութիւն. «Մաե ամենայն ուղղափառ ժողովք եպիսկոպոսաց, որ զուղղափառ հաւատսն հաստատեցին և կանոն սահմանեցին եկեղեցւոյ, և զայս սահմանեցին նդովիւք, եղբայր որ ասէ մի իշխեսցէ ի վանացն երանել, կալ ուր և կամեսցի, առանց կամաց վերակացուին և եղբայրութեան, (և որ որ զայս առնէ՝ ընդ նդովիւք կապեսցի ի հարցն)» (212): Այս վկայութեան մեջ անորոշ է նախ, թէ որոնք են բոլոր ուղղափառ եպիսկոպոսների ժողովները, որ ուղղափառ հաւատ հաստատել են, Բ. արդեօք ամբողջը բառացի վկայութիւն է, թէ վերջին նդովքը, որ մենք փակագծի մէջ առինք՝ իրանն է:

Յամենայն դէպս յայտնի է, որ երեք տիեզերական ժողովները վանքի մասին կանոն չեն դրել: Այլ և մեր տեսած կանոնադրքերի մէջ (Ձեռ. № 735—761). պահուած դաւառական ժողովների (մինչև Ս. դար) կանոնների մէջ այսպիսի որոշում չկայ. միայն Գանգրայի ժողովում՝ վանականութեան մասին խօսք է եղել, բայց բոլորովին այլ խնդիրներ են շօշափուել այնտեղ: Գուցէ մեզ անծանօթ տեղական դաւառական մի ժողով ի նկատի ունի, բայց այն հանգամանքը, որ այս կէտում ևս սա ըստ որոշման համաձայն է ս. Բարսեղի հետ և որ այստեղ անորոշ, ընդհանուր կերպով ասած է՝ «ամենայն ուղղափառ ժողովք» և ապա եզակի ձևով «ասէ», թոյլ է

4. Այս ժողովի քիչը յայտնի չէ՝ ըստ ոմանց 362—370 ք. իսկ ըստ այոց 376—380:

տալիս ենթադրելու որ այստեղ ժողով բառը մի ընդհանուր դարձուած է միայն:

Այսպէս թէ այնպէս յիշեալ ճառը զբութուած է Բարսեղեան կարգերով կառավարուող վանականներին յորդորելու համար որ նոքա պահպանեն եղած կարգերը և այս գէպքում էական գաղափարների մասին խօսելիս նորա մէջ մուտք են գտել և նման արտայայտութիւններ, երբեմն իսկ նախադասութիւններ: Զրապեցնող խնդիրներն են այստեղ եղբայրութեան միութիւնը և հաղանդութիւն առ առաջնորդն: Մեծ տեղ է բռնում նաեւ ձգնական կեանքի մասին ընդհանրապէս եղած խորհրդածութիւնն որտեղ արտայայտուած է հեղինակի անձնական հայեացքը վանական կեանքի մասին, որ տարբերուած է և Բարսեղի «Հարցողաց» գրքից և համաձայն է գալիս աւելի նորա անապատից առ Գրիգոր զրած թղթերի ոգուն: Ծառի զրութեան ժամանակի և հանգամանքների մասին աւելի որոշ բան ասելու համար պէտք է խնդիրը կապել ամբողջ Յաւախապատումի քննադատութեան հետ: Մեր նպատակն էր, ինչպէս ասացինք, ցոյց տալ այստեղ միայն նորա Բարսեղի վանական կարգերի հետ ունեցած առնչութիւնը:

Թող ենք տալիս մեզ սակայն հարեանցի աղնարկել, որ ըստ Կորիւնի ա. Մեարոր, ա. Սահակի մահուանից յետոյ՝ խիստ ձգնական վանական կեանք էր վարում—պահօք աղութիւք անձնական օրինակով մերձաւորներին հոգեւոր եռանդ էր ներշնչում, իսկ հեռավորներին թղթերով խրատում յորդորում—«Բազում թուղթս խրատագիրս և զգայացուցիւս ընդ ամենայն դաւառս տաքէր»:^{*}

Պ. Ս.



* Կորիւն 43—44. 1894 թ. Վեկն: Համամանկյան մեոֆի սակ ունեցել եմք Մ. Արսիս մեոագրասան № 871 գիրք հարցման ա. Բարսեղի եղև. և Յամախ. Վեկն. 1838 թ.:

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

ՕՐԹՈՂՈՔՈՒ ԵԿԵՂԵՑԻ.

Ռուսաց մի քանի ազգեցիկ թերթեր ուշադրութեան առնելով այն հանգամանքը, որ Կառավարութիւնը եկեղ. ծխական դպրոցների պահպանութեան համար մէկ և կէս միլիոն ռուբլի նպաստ է շնորհել, աւելի ցանկալի են համարում այդ խոշոր գումարը Լուս. Նախարարութեան ելեմուտքի մէջ մտցնել և քննադատում են եկեղեցական դպրոցների կարեւորութիւնն ու օգուտը: Գաղութական գործը սուս հոգեւորականութեան համար նոքա իբրեւ մի բնու. են ներկայացնում, որ վերջինս ակամայ է իւր վերայ վերցրել և առանձին պատրաստակամութիւն չէ ցոյց տալիս տանելու: Գորա հակառակ Церк. Вѣстникъ թերթը պաշտպան հանդիսանալով եկեղ. ծխական դպրոցների դատին, աշխատում է ցոյց տալ, որ հոգեւորականութիւնը իւր կարողութեան չափով շատ անգամ անձնուիրաբար, գործել է պղպիսի դպրոցների տարածման և բարգաւաճման համար: Յայտնի է, որ Ռուսաստանում երեք տեսակ դպրոցներ կան՝ Նախարարութեան, հասարակական վարչութիւնների և եկեղեցական կառավարութեան հսկողութեան ներքոյ: Այն Նահանգներում, ուր հասարակական վարչութիւններ կան 1893⁹⁴ թ.-ին այդ կարգի բոլոր դպրոցների թիւն էր 13,900 և նոցա մէջ սովորողներն՝ 945,670. Նախարարութեան դպրոցների թիւը 1,078 և սովորողներն 102,387. մինչ նոյն Նահանգներում 1893⁹⁶ թ.-ին 20,289 եկեղեցական դպրոցներ կային, 671,119 սովորողներով, Իսկ այն Նահանգներում, ուր չկան հասարակական վարչութիւններ՝ Նախարարութեան դպրոցների թիւն է 2,498, սովորողներն՝ 157,249. եկեղեցական դպրոցների թիւը 11,786, սովորողներն՝ 378,558. Այսպիսով Նախարարութեան և հասարակական դպրոցները ընդամենը 17,476 են՝ 1,205,256 սովորողներով. եկեղեցական դպրոցները 32,085 և սովորողներ 1,049,677. Յամենայն դէպս մի միլիոնից աւելի մանուկներ սովորում են ուրեմն եկեղեցական դպրոցներում և այդ բաւական է արդէն նոցա կարեւորութիւնն ապացուցանելու համար: Եթէ եկեղեցական իւրաքանչիւր դպրոցում միջին թուով աւելի քիչ սովորողներ կան, քան միւսներում, դորա պատճառը յիշեալ թերթը համարում է այն, որ եկեղ. դպրոցներն աւելի ուշ են յառաջ եկել, երբ արդէն քաղաքներն ու մեծ գիւղերը բռնուած էին և մնում էր փոքր, աղքատ, հեռու ընկած գիւղերում տեղ գտնել: Այդպիսի տեղերում և գործ է